

Յանկարծ իմ ականջին զարկեց մի երգի ձայն, նա խիստ քաղցր եղանակով հնչում էր առաւօտեան հովութեան մէջ, ես պարզ որոշում էի հետեւեալ խօսքերը.

Ահա ծագեց կարմիր արեւ,
Տաք եւ պայծառ է օրը,
Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
Յառա՛ջ տարէ՛ք արօրը:
Վարը վարենք, ակօս փօրենք,
Խո՛ր ակօսներ հողի մէջ,
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Տորեան դիզենք կայի մէջ:
Կը գայ ձմեռ – մենք վախ չունենք. –
Ուրա՛խ կ'անցնի մեր օրը.
Ուտելու միշտ պաշար ունենք,
Լի եւ կուշտ է մեր փորը:
Դէ՛, քաշեցէք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը,
Թող չասեն մեր դրացիքը՝
Ծոյլ են Յասօի եզները:

Երգողը Յասօն էր, որ ինչ-որ հեռու վարում էր իր արտը: Ես մօտեցայ նրան եւ տեղային սովորութեան յարմար ասեցի.

– Բարի յաջողութիւն:

Նա ընդունեց իմ ողջոյնը եւ շարունակեց իր գործը: Ես հարցրի՝ արդեօք նրա երգի պարունակութիւնը համապատասխանո՞ւմ էր իր դրութեանը, նա ձմեռը հաց կունենա՞ր ուտելու, եւ իր անասունները կարո՞ղ էին կուշտ ապրել: Նա պատասխանեց, թէ մենք միշտ երգում ենք այն, ինչ որ իսկապէս չունենք կամ բնաւ չենք ունեցել... Եւ անելացրեց՝ թէ լաւ է աշխատել առանց վաստակի, քան թէ անգործ մնալ. անգործութիւնը մեռելներին է պատկանում:

– Այս արտը աղայի մուք չէ, – ասաց նա:

– Բա՛ր ո՞ւմն է: